ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

2011թ – ի առաջին կիսամյակի

կատարած աշխատանքների վերաբերյալ:

2011 թվականի առաջին կիսամյակում ջանացել եմ օրենքի սահմաններում պաշտպանել Երվանդաշատ համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և շահերը: Աշխատել եմ այն կատարել առանց թերացումների:

2011 թվականի վաղ գարնանը կարգի եմ բերել համայնքի վոռոգման ցանցը , նորոգել դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհները : Օգնել մեխանիզատորներին որ պատրաստ լինեն գարնան գյուղատնտեսական աշխատանքների անցկացմանը :

Համայնքապետարանի բյուջեի հաշվից գնվել է մեկ տրակտոր և մեկ խոտ հակավորող մամլիչ, որով օգնում եմ համայնքի բնակիչներին շուկայականից ավելի մատչելի գներով անցկացնել անասնակերի կուտակման աշխատանքները:

Անբարենպաստ բնակլիմայական պայմանների պատճառով համայնքի բնակիչները ստիպված եղան կրկնակի անգամ ցանքս կատարել :

Ամռան սկզբին տեղացած կարկուտի հետևանքով շատ մեծ վնաս կրեց և այգեգործությունը և դաշտավարությունը: Կառավարությունից որպես աջակցություն ստացված սերմատեսակները բաժանվեց համայնքի բնակիչներին վնասված ցանքատարածքների վերականգման համար: Կարկտահարությունն է պատճառը, որ պլանային առաջադրանքները թերի է կատարվել:

Ուշի – ուշով հետևել եմ գյուղ. կենդանիների պրոֆիլակտիկ միջոցառումների անթերի կատարմանը: Առավել կարևոր միջոցառումների անցկացմանը և կազմակերպմանը մասնակցել են նաև գյուղապետարանի աշխատակիցները: Հատկապես արյան անալիզների համար խոշոր եղջերավոր կենդանիներից արյուն վերցնելու աշխատանքներին մասնակցել և օգնել են գյուղապետարանի աշխատակիցները:

Քաղաքացիների ընդունելությունը կատարում եմ սահմանված կարգով, ուշադրությամբ լսում ամենքին , քննարկում առաջ քաշած հարցերը և առաջարկությունները, ընդունում դիմումները և բողոքները, օրենքի սահմաններում ձեռնարկում եմ միջոցներ, հարցերին լուծում տալու համար:

Համայնքում կա մեկ ընտանիք երկկողմանի ծնողազուրկ երեխաներ: Մշտապես ուշադրություն եմ դարձնում և հոգ եմ տանում, որպեսզի այդ ընտանիքը չունենա չլուծվող խնդիրներ: Երբեմն օժանդակում եմ նյութական օգնությամբ «սննդամթերք և կենցաղային ապրանքներ»:

Կազմակերպել եմ հինգ աշխատատեղ Արաքս գետի պաշտպանիչ պատվարի կառուցապատման աշխատանքներին, համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Ֆինանսների բնագավառում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը: Հաշվետու ժամանակահատվածում եռամսյա հաշվետվություններ եմ ներկայացրել համայնքի ավագանուն: Վերահսկել եմ համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման գործընթացը:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել եմ հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները: Առաջին կիսամյակի ընթացքում մուտքագրվել է՝

հողի հարկ – պլան 1100.0 հազ. դրամ,- կատ. 708. 7 հազ. դրամ
գույքահարկ- պլան 350.0 հազ. դրամ – կատ. 304.2 հազ. դրամ
վարձավճար - պլան 350.0 հազար դրամ - կատ. 478.0 հազ. դրամ
ոչ հարկային եկամուտներ պլան 500.0 հազ. դրամ – կատ. 70.0 հազ. դրամ :

Հասարակական կարգի բնագավառում, առկա է բարի կամքի դրսևորում ոստիկանության աշխատակիցների հետ շփումների մեջ:

Կա փոխհամագործակցում աշխատանքների կազմակերպման գործընթացում:

Անձնագրային սեղանի պետի հետ մշտապես առկա է փոխադարձ տեղեկատվություն բնակիչների ներհոսքի, արտահոսքի, ժամանակավոր բացակայողների վերաբերյալ:

Պաշտպանության բնագավառում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

Աջակցել եմ զորակոչի կազմակերպչական աշխատանքներին, ժամանակին ներկայացրել զորակոչիկների անկետային տվյալները, բնութագրերը , տեղեկանքներ և այլն:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, բնակչության մեջ տարել եմ բացատրական աշխատանքներ «Ինքնակամ շինություններ» կանխարգելման ու կասեցման վերաբերյալ:

Ժամանակին կատարում եմ շինությունների հաշվառում, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն ներկայացնում մարզպետարան:

Մարզպետարանից ստացած շրջաբերականների ինֆորմացիան (բնակարանաշինության վերաբերյալ) հայտարարության միջոցով իրազեկում եմ համայնքի բնակիչներին:

Ուշի-ուշով հետևել եմ ոռոգման ջրի և խմելաջրի ցանցերի շահագործման վիճակին:

Պարբերաբար կատարել եմ խմելաջրի մանրեազերծում քլորացման եղանակով:

Պատշաճ մակարդակի է աղբաթափման աշխատանքները:

Հողօգտագործման բնագավառում հետևել եմ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Տրանսպորտ - Սույն բնագավառում իրականացնում եմ պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները:

Հետևում եմ համայնքային ենթակայության տակ գտնվող ճանապարհների, կամուրջների ու ինժիներական այլ կառույցների պահպանմանը և շահագործմանը: Տարվա ընթացքում հողալցման եղանակով վերանորոգել եմ գյուղամիջյան փողոցները որոնք գտնվում էին անմխիթար վիճակում:

Աջակցում եմ համայնքին սպասարկող միկրոավտոբուսի աշխատանքների կազմակերպմանը:

Առևտրի և սպասարկման բնագավառում վերահսկում եմ համայնքում գործող մթերային խանութների և սնունդ արտադրող օբյեկտների աշխատանքները: Յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություններ եմ ներկայացնում մարզպետարան հանրային սննդի և առևտրի օբյեկտների վերաբերյալ:

Կրթության և մշակույթի բնագավառում, միշտ տեղեկացված եմ եղել այս բնագավառի խնդիրներին և տվել հրատապ լուծումներ: Աշխատանքներ եմ տանում կապ ստեղծել դպրոցի, բնակչության, մշակույթի տան և գրադարանի միջև, որը ինձ մասամբ հաջողվում է:

Դպրոցում անց եմ կացրել միջոցառում հայոց լեզվի իմացության խթանման համար: Աչքի ընկնող դասարանները և անհատ աշակերտները համայնքապետարանի կողմից պարգևադրվել են հուշանվերներով:

Աջակցում եմ դպրոցի վերանորոգման աշխատանքների ընթացքում ծագող խնդիրներին տալ հրատապ լուծումներ:

Առողջապահության բնագավառում հաճախակի խորհրդակցության եմ հրավիրում գյուղի առողջության կենտրոնի տնօրենին: Լսում եմ առաջ քաշված խնդիրները քննարկում դրանք և տալիս համապատասխան լուծումներ: 2010 թվականի ընթացքում գյուղում գրանցվեց օձի խայթման 2 դեպք, որը հուշում է որ այս տարում անհրաժեշտ է ունենալ հակագյուրզին : Ակնկալում եմ այս հարցում վերադաս մարմինների աջակցությունը:

Սոցիալապես անապահով խավերի համար աշխատում եմ ամեն ինչ անել նրանց պայմանների բարելավման համար:

Եթե աշխատատեղեր են բացվում, առաջնահերթ այդ ընտանիքների անդամներին եմ ապահովում աշխատանքով:

Ամփոփիչ խոսքով ուզում եմ ասել որ իմ աշխատանքները նպատակամղված են Երվանդաշատ համայնքի բնակիչների ապրելակերպը բարեկեցիկ դարձնելուն:

Երվանդաշատի գյուղապետ / Հ.Ավետիսյան